

## Ուղղեցույց առողջապահության բնագավառի աշխատակիցների համար

Սույն ուղղեցույցը նախատեսված է վալպրոատների կիրառմամբ պայմանավորված ռիսկերի նվազեցման համար նպատակ ունենալով վալպրոատներ նշանակող բժիշկներին տեղեկացնել վերաբրտադրողական տարիքում կամ հղիության փուլում գտնվող կանանց համար վերջիններիս կիրառմամբ պայմանավորված հնարավոր ռիսկերը:

Ուղղեցույցում ներկայացված է նորագույն տեղեկատվություն այն մասին, որ հղիության ընթացքում վալպրոատներ ընդունած կանանց երեխաների մոտ բացի արդեն հայտնի զարգացման արատների առաջացման ռիսկից, առկա է նաև նյարդաբանական շեղումների առաջացման ռիսկը:

Սույն ուղղեցույցը հարկավոր է օգտագործել հիվանդների համար նախատեսված Տեղեկատվական գրքույկի և փաստաթղթի(Բլանկը) հետ միասին, որը կհաստատի, որ ծանոթացել են բուժման վերաբերյալ տեղեկատվությանը (պայմանագիր բուժման վերաբերյալ): Բուժման վերաբերյալ տեղեկատվության հետ ծանոթ լինելու փաստաթղթը (Բլանկը) պետք է ստորագրվի ձեր և ձեր հիվանդի կողմից:

Վալպրոատների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար ծանոթացեք վերջինիս բժշկական կիրառման վերաբերյալ ցուցմանը՝ նախքան այն հիվանդին նշանակելը:

### ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ ԿԱՆԱՆՑ ՎԱԼՊՐՈԱԹԹՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԱԼՊՐՈԱՍՆԵՐԻ ակտիվ բաղադրիչը վալպրոատթթուն է, որը հայտնի է իր տերատոգեն (հրեշածին) ազդեցությամբ՝ առաջացնելով զարգացման բնածին արատներ: Ունեցած տվյալները նաև ցույց են տալիս, որ պտղի վրա վալպրոատների ազդեցությունը կարող է մեծացնել զարգացման խախտումների առաջացման ռիսկը: Այդ ռիսկերը հակիրճ կերպով ներկայացված են ստորև:

#### 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱԾԻՆ ԱՐԱՏՆԵՐ

Մետավերլուծության տվյալները (այդ թվում կոհորտ վերլուծություններն ու արձանագրությունները) ցույց են տվել, որ էպիլեպսիայով տառապող և հղիության ընթացքում վալպրոատային մոնոթերապիա ստացած կանանց երեխաների 10,73%-ը տառապում է զարգացման բնածին արատներով (95% ՎՄ: 8.16 -13.29), ինչն իրենից ներկայացնում է զարգացման հիմնական բնածին արատների մեծ ռիսկ, այն դեպքում, երբ ամբողջ բնակչության համար այդ ռիսկը գրեթե 2-3%- է<sup>1</sup>: Ձեռքբերված տվյալները վկայում են, որ ռիսկը պայմանավորված է դեղաչափով: Ռիսկերը մեծանում են մեծ դեղաչափերի դեպքում (օրվա ընթացքում 1 գր-ից ավելի): Ունեցած տվյալների հիման վրա հնարավոր չէ սահմանել այն սահմանային դեղաչափը, որից ցածրի դեպքում ռիսկը բացակայում է:

Զարգացման արատների առավել տարածված տեսակները ներառում են նյարդային խողովակի արատները, դիմային գանգի կառուցվածքի խախտումները, նապաստակի շրթունքը և գայլի երակը, կրանիոստենոզը, զարգացման սրտային, երիկամային և միզասեռական արատները, վերջույթների զարգացման արատները (ներառյալ ճառագայթային ոսկրի երկկողմ ապլազիան), ինչպես նաև օրգանիզմի տարբեր համակարգերի զարգացման բազմաթիվ շեղումներ:

#### 2. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Վալպրոատների ներարգանդային ազդեցությունը կարող է պատճառ դառնալ երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման խախտումների համար: Ռիսկը պայմանավորված է դեղաչափով, սակայն ունեցած տվյալների հիման վրա հնարավոր չէ սահմանել այն սահմանային դեղաչափը, որից ցածրի դեպքում ռիսկը բացակայում է: Տվյալ ազդեցությունների զարգացման հստակ գեստացիոն

տարիքը (հղիության տարիք) հայտնի չէ, և չի կարելի բացառել ռիսկի հնարավորությունն ամբողջ հղիության ընթացքում:

Նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնասիրությունները<sup>2-5</sup>, ովքեր ենթարկվել են վաղաբուժության ներարգանդային ազդեցությանը, ցույց են տվել, որ 30-40% երեխաների մոտ առկա են վաղ զարգացման ուշացման հատկանիշներ, ինչպես օրինակ՝ քայլքի և խոսքի հմտությունների ուշացում, մտավոր զարգացվածության ավելի ցածր մակարդակ, ոչ բավարար լեզվական հմտություններ (խոսք և ընկալում) և հիշողության խնդիրներ:

Վաղաբուժության ներարգանդային ազդեցությանը ենթարկված նախադպրոցական տարիքի երեխաների (6 տարեկան) ինտելեկտի գործակիցը (IQ), համաձայն անամնեզի, միջինում 7-ից 10 բալով ցածր է, քան այն երեխաների մոտ, ովքեր ենթարկվել են հակաէպիլեպտիկ այլ դեղորայքների ազդեցությանը<sup>9</sup>: Չնայած, որ չի կարելի բացառել ազդեցության այլ գործոնների հետ համադրությունը, ակնհայտ է, որ վաղաբուժության ազդեցությանը ենթարկված երեխաների մտավոր խախտումների ռիսկը պայմանավորված չէ մոր IQ-ով:

Առանձին տվյալների վերաբերյալ քանակը սահմանափակ է:

Ձեռքբերված տվյալները ցույց են տալիս, որ վաղաբուժության ներարգանդային ազդեցությանը ենթարկված երեխաների մոտ աուտիկ սպեկտրի խախտումների և մանկական աուտիզմի զարգացման ռիսկն ավելի մեծ է՝ համապատասխանաբար (3 և 5 անգամ)՝ բնակչության հետ համեմատած<sup>7</sup>:

Համաձայն որոշ տվյալների, վաղաբուժության ներարգանդային ազդեցությանը ենթարկված երեխաների մոտ, ամենայն հավանականությամբ, կարող են զարգանալ ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշները (ՈԻՊԳՀ)<sup>8</sup>:

## Կին պացիենտների բուժումը վաղաբուժությամբ

### Ա. ԱՂՋԻԿ-ՊԱՅԻԵՆՏՆԵՐԻՆ ԴԵՂԱՄԻՋՈՑԻ ԱՌԱՋԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Բժշկական գնահատականից հետո դուք պետք է խորհեք Ձեր հիվանդին վաղաբուժական հիմնավորվածություն շուրջ.

- Համոզվեք, որ վաղաբուժությամբ բուժումն անհրաժեշտ է Ձեր պիվանդին (այսինքն՝ բուժման բոլոր մյուս մեթոդները փորձվել են, սակայն անհրաժեշտ արդյունք չեն տվել):
- Ձեր հիվանդի և նրա ընտանիքի անդամների/խնամակալների հետ քննարկեք հետևյալ հարցերը.
  - Հիմնական հիվանդությամբ պայմանավորված՝ հղիության ռիսկերը,
  - Բուժմամբ պայմանավորված ռիսկերը՝ ներառյալ վաղաբուժության ռիսկերը՝ հղիության դեպքում,
  - Չպլանավորված հղիությունից խուսափելու համար արդյունավետ հակաբեղմնավորիչի օգտագործման անհրաժեշտությունը,
  - Բուժման պլանի պարբերաբար վերանայման անհրաժեշտությունը:
- Արդյունավետ հակաբեղմնավորիչի վերաբերյալ կոնսուլտացիայի համար ընտրեք առավել հարմար ժամանակ և, անհրաժեշտության դեպքում, Ձեր հիվանդին ուղղորդեք համապատասխան մասնագետի մոտ:
- Համոզվեք, որ Ձեր հիվանդը /ընտանիքի անդամները/մարդիկ, ովքեր խնամում են հիվանդին, լավ են հասկացել ռիսկերի բնույթն ու մեծությունը, ինչպես նաև գիտակցում են հնարավոր հետևանքները՝ հղիության դեպքում:
  - Ձեզ օգնելու համար մշակվել է հիվանդի համար նախատեսված տեղեկատվական գրքույկը, որում ներկայացված է տեղեկատվություն տերատոգեն անվտանգության, ինչպես նաև բուժումը կառավարելու առանցքային պահերի վերաբերյալ.
    - Ծանոթացեք այդ տեղեկատվական գրքույկի հետ՝ այն ձեզ կօգնի ձեր հիվանդին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել,
    - Պատճենահանված մեկ օրինակ տրամադրեք ձեր հիվանդին:
- Խորհուրդ տվեք ձեր հիվանդին անմիջապես կապվել ձեզ հետ, այն դեպքում, երբ
  - Առկա է հղիություն կամ հիվանդը կասկած ունի հղիության վերաբերյալ:

- Նշանակված վալպրոատների օգտագործման դեպքում հիվանդի մոտ կողմնակի ազդեցություններ չի հայտ կգան:
- Նշանակված վալպրոատների օգտագործման դեպքում հիվանդի մոտ ոչ ցանկալի երևույթների առաջացման դեպքում տվյալ տեղեկությունը հայտնեք Ձեր բժշկական հաստատության ղեղորայքային վերահսկիչին կամ այդ ղեղամիջոցի արտադրողին:
- Վերապլանավորեք բուժման վերանայման հնարավորությունն այն դեպքում, եթե հիվանդը վերարտադրողական տարիքի է:

**Բ.ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԿԱՆԱՅՔ, ՈՎՔԵՐ ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

Բժշկական ուսումնասիրությունից հետո Դուք պետք է դիտարկեք ձեր հիվանդին վալպրոատներ նշանակելու անհրաժեշտությունը՝

- Հավոզվեք, որ վալպրոատներով բուժումը հարմար է Ձեր հիվանդի համար (այսինքն կիրառվել են բուժման այլ համապատասխան մեթոդներ, սակայն անհրաժեշտ արդյունք չեն տվել):
- Ձեր հիվանդի հետ քննարկեք հետևյալ հարցերը՝
  - Հղիության համար ռիսկերը՝ պայմանավորված հիմնական հիվանդությամբ,
  - Բուժման հետ կապված ռիսկերը՝ ներառյալ հղիության ընթացքում վալպրոատների կիրառմամբ պայմանավորված ռիսկերը,
  - Չպլանավորված հղիությունը բացառելու համար արդյունավետ հակաբեղմնավորիչի օգտագործման անհրաժեշտությունը,
  - Բուժման պլանի պարբերական վերանայման անհրաժեշտությունը:
- Գնահատեք կոնսուլտացիայի անհրաժեշտությունը՝ մինչ բեղմնավորումը:
- Համոզվեք, որ Ձեր հիվանդը հասկանում է հղիության ընթացքում վալպրոատների օգտագործմամբ պայմանավորված երեխաների համար առկա ռիսկերի բնույթն ու մեծությունը, ինչպես նաև համաձայն է հետևել հղիության վերաբերյալ խորհուրդներին:

Ձեզ օգնելու համար մշակվել է հիվանդի համար նախատեսված տեղեկատվական գրքույկը, որում ներկայացված է տեղեկատվություն տերատոգեն անվտանգության, ինչպես նաև բուժումը կառավարելու առանցքային պահերի վերաբերյալ:

- Պատճենահանված մեկ օրինակ տրամադրեք ձեր հիվանդին:
- Խորհուրդ տվեք ձեր հիվանդին անմիջապես կապվել ձեզ հետ, այն դեպքում, երբ
  - Առկա է հղիություն կամ հիվանդը կասկած ունի հղիության վերաբերյալ:
  - Նշանակված վալպրոատների օգտագործման դեպքում հիվանդի մոտ կողմնակի ազդեցություններ չի հայտ կգան:
  - Նշանակված վալպրոատների օգտագործման դեպքում հիվանդի մոտ ոչ ցանկալի երևույթների առաջացման դեպքում տվյալ տեղեկությունը հայտնեք Ձեր բժշկական հաստատության ղեղորայքային վերահսկիչին կամ այդ ղեղամիջոցի արտադրողին:

**Գ. ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԿԱՆԱՅՔ, ՈՎՔԵՐ ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

- Հիշեցրեք ձեր հիվանդներին տերատոգեն վտանգների և երեխաների մոտ խախտումների ռիսկերի մասին, եթե հղիության ընթացքում մայրն օգտագործում է վալպրոատներ: Այն ռիսկերի մասին, որոնք առաջանում են ցնցումային նոպաների բուժման համար անհրաժեշտ թերապիայից հրաժարվելու դեպքում, ինչպես նաև երկբևեռային աֆեկտիվ խանգարման դեպքում:
- Ըստ պացիենտի մոտ առկա ցուցումների՝ կշռադատեք վալպրոատներով թերապիայի օգուտը/ռիսկը՝
  - Դիտարկեք, հնարավոր է արդյոք դադարեցնել բուժումը կամ անցնել այլընտրանքային բուժման:
  - Եթե ռիսկերի և օգուտի մանրամասն գնահատականի դեպքում անհրաժեշտ է շարունակել վալպրոատներով բուժումը, ապա խորհուրդ է տրվում մեկ օրվա

համար նախատեսված դեղաչափը բաժանել մի քանի ավելի փոքր դեղաչափի՝ օրվա ընթացքում դրանք արդյունավետ ամենացածր դեղաչափով ընդունելու համար: Այս մեթոդը կարող է նախընտրելի լինել բուժման այլ ձևերի նկատմամբ:

- Եվ վալպրոատներով մոնոթերապիան, և այլ դեղերի հետ համադրությամբ վալպրոատներով բուժումը կարող են զարգացման բնածին արատների պատճառ դառնալ: Ձեռք բերված տվյալները վկայում են այն մասին, որ այլ դեղորայքների հետ համադրությամբ վալպրոատներով հակաէպիլեպտիկ թերապիայի դեպքում հղիության արատների առաջացման ռիսկն ավելի մեծ է՝ քան վալպրոատներով մոնոթերապիայի դեպքում:
- Բուժման ընթացքում ֆոլաթթվի կիրառումը կարող է նվազեցնել նյարդային խողովակի թերությունների զարգացման ընդհանուր ռիսկը, սակայն չկան տվյալներ, որ այն նվազեցնում է մյուս բնածին արատների ռիսկը՝ պայմանավորված վալպրոատների ներարգանդային ազդեցությամբ:
- Մտածեք Ձեր հիվանդին ուղղորդել այլ մասնագետների մոտ՝ մինչ հղիությունը համապատասխան կոնսուլտացիա ստանալու համար:
- Համոզվեք, որ Ձեր հիվանդը միանգամայն հասկանում է հնարավոր ռիսկերի բնույթն ու մեծությունը:
  - Հիվանդների համար նախատեսված տեղեկատվական գրքույկը, որում թվարկված են բոլոր ռիսկերը, պետք է տրամադրեք Ձեր հիվանդին.
  - Պատճենահանված մեկ տարբերակ տրամադրեք Ձեր հիվանդին:
- Խորհուրդ տվեք ձեր հիվանդին անմիջապես դիմել բժշկի՝ հղիության առկայության կամ կասկածի դեպքում՝ պտղի զարգացումը վերահսկելու համար՝ ներառյալ նյարդային խողովակի հնարավոր թերությունների կամ այլ խախտումների նախաձննդյան ախտորոշումը:
- Խորհուրդ է տրվում, որ վալպրոատներ օգտագործող կանանց հղիությունը գրանցվի հակաէպիլեպտիկ դեղամիջոցների և հղիության գրանցամատյանում, և/կամ այդպիսի տվյալների հավաքագրման ազգային համակարգում:
- Ձեր հիվանդին խորհուրդ տվեք անմիջապես դիմել բժշկի՝ նշանակված վալպրոատների օգտագործման դեպքում վերջինիս մոտ կողմնակի ազդեցություններ ի հայտ գալու դեպքում:
- Նշանակված վալպրոատների օգտագործման դեպքում հիվանդի մոտ ոչ ցանկալի երևույթների առաջացման դեպքում տվյալ տեղեկությունը հայտնեք Ձեր բժշկական հաստատության դեղորայքային վերահսկիչին կամ այդ դեղամիջոցի արտադրողին:

## Դ. ԶՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՅՔ

- Շտապ հանդիպում ծրագրավորեք Ձեր հիվանդի հետ՝ վալպրոատների օգտագործմամբ պայմանավորված օգուտի և ռիսկերի հարաբերակցությունը վերագնահատելու համար:
- Մինչ հիվանդի հետ հանդիպելը՝ խորհուրդ տվեք նրան շարունակել բուժումը մինչև այն պահը, երբ դուք նրան կտրամադրեք համապատասխան խորհուրդներ՝ իրավիճակը գնահատելուց հետո:
  - Եթե հնարավոր ռիսկերի և օգուտի վերլուծության արդյունքում հանգել եք եզրակացության, որ ահնրաժեշտ է շարունակել վալպրոատներով բուժումը, ապա խորհուրդ է տրվում մեկ օրվա համար նախատեսված դեղաչափը բաժանել մի քանի ավելի փոքր դեղաչափի՝ օրվա ընթացքում դրանք արդյունավետ ամենացածր դեղաչափով ընդունելու համար : Երկարձգված դուրսբերմամբ դեղամիջոցի կիրառումը կարող է ավելի նախընտրելի լինել մյուս դեղաձևերից:
  - Եվ վալպրոատներով մոնոթերապիան, և այլ դեղերի հետ համադրությամբ վալպրոատներով բուժումը կարող են զարգացման բնածին արատների պատճառ դառնալ: Ձեռքբերված տվյալները վկայում են այն մասին, որ այլ դեղորայքների հետ համադրությամբ՝ վալպրոատներով հակաէպիլեպտիկ

թերապիայի դեպքում հղիության անոմալ լուծման ռիսկն ավելի մեծ է՝ քան վալպրոատներով մոնոթերապիայի դեպքում:

- Բուժման ընթացքում ֆոլաթթվի կիրառումը կարող է նվազեցնել նյարդային խողովակի թերությունների զարգացման ընդհանուր ռիսկը, սակայն չկան տվյալներ, որ այն նվազեցնում մյուս բնածին արատների ռիսկը՝ պայմանավորված վալպրոատների ներարգանդային ազդեցությամբ:
- Համոզվեք, որ Ձեր հիվանդը.
  - Միանգամայն ճիշտ է հասկանում վալպրոատներով պայմանավորված հնարավոր ռիսկերի բնույթն ու մեծությունը՝ հղիության դեպքում:
  - Ստացել է հիվանդների համար նախատեսված տեղեկատվական գրքույկը:
- Սկսել համապատասխան նախաձեռնյալ վերահսկողություն՝ նյարդային խողովակի հնարավոր թերությունների կամ զարգացման այլ արատների բացահայտման նպատակով:
- Խորհուրդ է տրվում, որ վալպրոատներ օգտագործող կանանց հղիությունը գրանցվի հակաէպիլեպտիկ դեղամիջոցների և հղիության գրանցամատյանում, և/կամ այդպիսի տվյալների հավաքագրման ազգային համակարգում:

#### Ամփոփում

##### Ա. ԱՂՋԻԿ-ՀԻՎԱՆՊԵՐԻՆ ԴԵՂԱՍԻՋՈՑԻ ԱՌԱՋԻՆ ՆՇԱՆԱՎՈՐՄԸ

- Ամբողջական տեղեկատվություն տրամադրեք նորածնի համար ներարգանդային ռիսկերի վերաբերյալ՝ պայմանավորված հենց հիվանդությամբ, ինչպես նաև հղիության ընթացքում նատրիումի վալպրոատի օգտագործմամբ:
- Գնահատեք Ձեր պացիենտի համար նատրիումի վալպրոատի օգտագործման անհրաժեշտությունը:
- Ձեր հիվանդին տեղեկացրեք արդյունավետ հակաբեղմնավորիչի օգտագործման անհրաժեշտության մասին:
- Համոզվեք, որ Ձեր հիվանդը ստացել է հիվանդների համար նախատեսված տեղեկատվական գրքույկը:
- Եթե հնարավոր է, ապա Ձեր հիվանդին խորհուրդ տվեք անմիջապես կապ հաստատել Ձեզ հետ՝ հղիության առկայության կամ կասկածի դեպքում:

##### Բ.ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԿԱՆԱՅՔ, ՈՎՔԵՐ ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

- Ամբողջական տեղեկատվություն տրամադրեք նորածնի համար ներարգանդային ռիսկերի վերաբերյալ՝ պայմանավորված ինչպես մայրիկի հիվանդությամբ, այնպես էլ մայրիկի բուժմամբ:
- Գնահատեք Ձեր հիվանդի համար վալպրոատների օգտագործման անհրաժեշտությունը:
- Ձեր հիվանդին տեղեկացրեք արդյունավետ հակաբեղմնավորիչի օգտագործման անհրաժեշտության մասին:
- Համոզվեք, որ Ձեր հիվանդը ստացել է հիվանդների համար նախատեսված տեղեկատվական գրքույկը:
- Ձեր հիվանդին խորհուրդ տվեք անմիջապես կապվել Ձեզ հետ՝ հղիության առկայության կամ կասկածի դեպքում:

##### Գ. ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԿԱՆԱՅՔ, ՈՎՔԵՐ ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

- Ամբողջական տեղեկատվություն տրամադրեք նորածնի համար ներարգանդային ռիսկերի վերաբերյալ՝ պայմանավորված ինչպես մայրիկի հիվանդությամբ, այնպես էլ վալպրոատներով մայրիկի բուժմամբ:
- Վերլուծեք հիվանդի թերապիայով պայմանավորված օգուտն ու ռիսկերն:
- Ընտրեք համապատասխան բուժում:
- Ձեր հիվանդին խորհուրդ տվեք անմիջապես կապ հաստատել Ձեզ հետ՝ հղիության առկայության կամ կասկածի դեպքում:
- Համոզվեք, որ Ձեր հիվանդը ստացել է հիվանդների համար նախատեսված

**տեղեկատվական գրքույկը:**

**Դ. ՉՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՅՔ**

- **Տեղեկացրեք նրան, որ անհրաժեշտ է շարունակել բուժումը՝ մինչև Ձեզ հետ հանդիպելը:**
- **Շտապ հանդիպում նախատեսեք:**
- **Վերագնահատեք հիվանդի բուժմամբ պայմանավորված օգուտն ու ռիսկերը:**
- **Համոզվեք, որ Ձեր հիվանդը հասկացել է հղիության ընթացքում վալպրոատներով բուժման հնարավոր ռիսկերի բնույթն ու մեծությունը:**
- **Համոզվեք, որ Ձեր հիվանդը ստացել է հիվանդների համար նախատեսված տեղեկատվական գրքույկը:**

**Գրականության ցանկ**

1. Մեադոր Կ., Ռեյնոլդս Մ. Ու., Կրին Ս., Ֆարբախ Կ., Պրոբստ Կ.: Էպիլեպսիայով տառապող կանանց հղիության լուծումը. համակարգված ուսումնասիրություն և հղիների հրատարակված գրանցամատյանի մետավերլուծություն: *Epilepsy Res.* 2008;81(1):1-13.
2. Բրոմլի Պ.Լ., Մոեր Գ., Լով Ջ., Քլի Ջ., Պուրդի Լ., Մաքելվան Լ. և համահեղինակներ: Էպիլեպսիայով հիվանդ կանաց երեխաների վաղ ճանաչողական զարգացումը. հեռանկարային հաշվետվություն: *Epilepsia* Հոկտեմբեր 2010թ.:51(10):2058-65.
3. Կամինգս և համահեղինակներ: Լամբոտրիջինի, նատրիումի վալպրոատի եւ կարբամազեպիայի ներարգանդային ներգործական ազդեցությանը ենթարկված երեխաների ուղեղի զարգացումը: *Arch Dis Child* 2011;96:643-647
4. Մեադոր Կ. և համահեղինակներ: Ճանաչողական գործառույթը հակաէպիլեպտիկ դեղամիջոցների սաղմնային ներգործությունից 3 տարի անց: *NEJM* 2009;360 (16): 1597- 1605
5. Թոմաս Ս. Վ. և համահեղինակներ: Հակաէպիլեպտիկ դեղամիջոցների ներարգանդային ազդեցությանը ենթարկված նորածինների շարժիչ հմտություններն ու մտավոր զարգացումը: *Epilepsy and Behaviour* 2008 (13):229-236
6. Մեադոր Կ. Ջ., Բեյկեր Գ. Ա., Բաունինգ Ն., Քոեն Մ. Ջ., Բրոմլի Պ. Լ., Կլեյտոն-Սմիթ Ջ., Կալայջին Լ. Ա., Կաններ Ա., Լիպոռեյս Ջ. Դ., Պենել Պ. Բ., Պրիվիտերա Մ., Լորինգ Դ. Ու.: Նյարդաբանական զարգացմամբ պայմանավորված արդյունքներն ուսումնասիրող խումբ: Ճանաչողական գործառույթի արդյունքները հակաէպիլեպտիկ դեղամիջոցների սաղմնային ներգործությունից 6 տարի անց. հեռանկարային ճանաչողական հաշվետվություն: *Lancet Neurol.* Մարտ 2013թ.:12(3):244-52
7. Կրիստենսեն Ջ. և համահեղինակներ: Վալպրոատի նախածննդյան ազդեցությունը, աուտիկ սպեկտրի շեղումների և մանկական աուտիզմի զարգացման ռիսկերը: *JAMA* 2013;309(16):1696-1703
8. Կոեն Մ. Ջ. և համահեղինակներ: Հակաէպիլեպտիկ դեղամիջոցների ներարգանդային ազդեցությունը. շարժողական, հարմարվողական/վարքային գործառույթը 3 տարեկան հասակում: *Epilepsy Behav.* 2011; 22(2):240-246
9. Մեադոր Կ. և համահեղինակներ: Հակաէպիլեպտիկ դեղամիջոցների ներարգանդային ազդեցությունը և ճանաչողական գործառույթները 6 տարեկան հասակում (Նյարդաբանական զարգացման արդյունքների ուսումնասիրություն): Հեռանկարային ճանաչողական հաշվետվություն. *Lancet Neurol.* Մարտ 2013թ.:12(3): 244-252

**Հավելվածներ**

1. Պացիենտների համար նախատեսված տեղեկատվական գրքույկ:
2. Բուժման պայմանագրի բլանկ (Բլանկ, որը հաստատում է, որ ծանոթացել են բուժման վերաբերյալ տեղեկատվությանը):
3. Պացիենտի գրքույկ: